# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» հոկտեմբերի 2025թ.  N ՄՈ/881-Ա

ք. Արմավիր

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 4-րդ կետով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 19-րդ մասով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով.

**ո ր ո շ ու մ ե մ**

1. Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով հաստատված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով նախատեսված միջոցների հաշվին 2025 թվականի սեպտեմբեր ամսին աշխատանքային բարձր ցուցանիշներ ապահովելու համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի հայեցողական պաշտոններ զբաղեցնող աշխատակիցներին պարգևատրել՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏ՝** **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Недействительная подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզպետի
2025թ. Հոկտեմբերի 07-ի ՆՄՈ /881 -Ա որոշման

**ՑԱՆԿ**

*ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի պարգևատրվող աշխատողների*

| հ/հ | Ազգանուն | Անուն | Պաշտոն | պարգևատրման չափը |
|---|---|---|---|---|
| 1 | Պետրոսյան | Արսեն | մարզպետի խորհրդական | 197,600 |
| 2 | Գրիգորյան | Արամ | մարզպետի խորհրդական | 107,782 |
| 3 | Եղիազարյան | Արբակ | մարզպետի խորհրդական | 89,818 |
| 4 | Շառոյան | Թամարա | մարզպետի օգնական | 56,160 |
| 5 | Մարգարյան | Սիրանուշ | մարզպետի տեղակալի օգնական | 17,018 |

Գլխավոր քարտուղար Ա. Հովհաննիսյան